

**ՄՈՍԿՎԱՅԻ ԿՐԵՄԼԻ ԶԻՆԱՊԱԼԱՏԻ
ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1976 թ. Հայաստանի վիճադրադիտական արշավախմբին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալու Մոսկվայի կրեմլի Զինապալատի ֆոնդերում պահպանվող հայերեն գրություն ունեցող առարկաներին, որոնք գեանգված էին «Վրացական ֆոնդում»¹: Սակայն ուսումնա-սիրությունից պարզվեց, որ այսանգ եղած 26 իրերից 21-ը ունեն հայերեն, երկուսը՝ վրացերեն և երեքը հունարեն արձանագրություններ²: Հայերեն արձանագրությունները փորագրված են թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով ընգերուզված արծաթյա խաչերի, սկիհների, քոցների, մասնատուփերի և այլ եկեղեցական իրերի վրա, որոնք նվիրաբերված են եզել Հաչդարխանի (Աստարխանի), Ղզլարի, Կաֆայի (Թեոգոսայի), Ղարասուի (այժմյան Ղրիմի մարզի Բելոգորսկ քաղաքի), Գեոզլեի (Շվպաաորիայի), Նոր Նախիջեանի և այլ գագթավայրերի հայոց վանքերին ու եկեղեցիներին:

Արձանագրությունները թփե իրենց բնույթով հիշատակագրային են և թվագրվում են հիմնականում 17-18-րդ դարերով, այնուամենայնիվ, կարեւոր արժեք են ներկայացնում հայկական գաղութների պաամության համար: Դրանցում հիշատակվում են աարրեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ (հոգևորականներ, առևարականներ, պաշտոնատար անձինք): Այստեղ նույնպես հետաքրքրական վկայություններ են պահպանված հայոց անձնանունների փոփոխման, լեզվաոճական իրակուլթյունների վերաբերյալ:

**Աստղև, ըսա Զինապալաաի գույքահամարների, հաջորդարար տալիս եմք արձանագրու-
թյունների վերծանությունները՝ իրենց գրչագրերով հանդերձ:**

162. (2646). Սկիհ արծաթյա, ոսկեգօծված, վերին չուրթի եզրերին՝ 3 առգ.

[illegible]

Յ[Ի]Շ[Ա.]Տ[Ա.Կ] Է ՍԿԻՀՍ ՃԵՄԱ ԺՈՂՈՎՐԹ/ԵԱՆ
ՕՋՈՒԻ [Ի] ԴՈՒՌՆ ՍԲ ԳԷՈՐԳԻՆ./ԹՎ[ԻՆ] ՌՃՂԳ
(1774)ԻՆ:

ԾԱՆՈԹ. 1. «Ճեմած ժողովուրդ» ասելով՝ նկատի ունեին պարսկաճալերին:

2. Օգու բնակավայրի ստույգ տեղագրությունը մեզ անհայտ է: Այն հիշատակված է «Մանր ժամանակագրություններում» (տես «Մանր ժամանակագրություններ», 13-18-րդ գգ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1-ին, Երևան, 1951, էջ 232): «Հայկազեան րառարանում» կա այս բառի հետևյալ բացատրությունը. «Օգու սույու-Նիեփեր գետ, Բորիսթեն» («Հայկազեան րառարան», հ. Բ, Վենետիկ, 1769, էջ 690):

Հրաս. Գո. Գրիգորյան, ՄԶՀԱ, 80

ՀԱՆՍԱՆԿ. 20 աթ

1 Տեա Գր. Գրիգորյան, Մոսկվայի Կրեմլի Զինապալատի հայերեն արձանագրությունները, «Լրուսքեր հասարակական գիտություններ», 1982, №8, էջ 80-88: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ անջնայումս հիշյալ թանգարանի տնօրինությանը, մասնավորապես մասկին գլխավոր ֆոնդապահ Ե. Ս. Սիդորովին, ֆոնդերի վարիչ Վ. Ի. Մարկովային, աշխատակիցներ Ի. Դ. Կոստինային և Գ. Ս. Կատալինսկայային՝ մեզ հետաքրքրող նյութերը սրամատրելու և աջակցելու համար:

2 Թանգարանի գիտական աշխատակիցների խնդրանքով՝ լուրջ հայերեն արձանագրությունները մեր կողմից անվճար օգնություն թարգմանվեցին ռուսերեն և սրամատրվեցին նոր ստեղծվելիք «Հայերեն իրերի քառհիմն»:

163. (2647). Անոթ արծաթյա, ոսկեզօծված, 13,5 սմ տրամագծով: Մակերեսին պատկերված է գառ, որի աջ կնիակի մեջ խաչաձև զրուռակ է, վրան՝

Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ Թ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս:




Հրատ. Գր. Գրիգորյան,
ՄՋՀԱ, 80

Լուսանկ. 21

164. (18606). Սկիի արծաթյա, ոսկեզօծված, գեղեցիկ զարդանախշերով:

Պատվանդանին՝ չրջանաձև. 2 առդ.




ԹԻՇԱ[ՏԱ]Կ Է ԱՆԴՐԻԱՍԻ ՈՐԴԻ/
ԲԱՂԴԱՍԱՐԻՆ ԵՒ ՈՒՐ ԿԵՆԱԿԻՑ/
ԵՂԻՍԱՊԵՏԻՆ. Ի ԴՈՒՌՆ ՂԱԼԱՐՈՒ/ ՍՈՒՐԲ
Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ,
ՀՈԳՈՒՆԱԿՈՒԹ[ԵԱՄ]Բ/ ՍՐԲ[Ա]ԶԱՆ ՅՈՎԱԷՓ
ԱՐԲԵՊԻՍԿՈՍՏԻՆ/ԱՐՂՈՒԹԷՆՑ. 1784:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 81

Լուսանկ. 22

165. (18716). Սկիի արծաթյա, ոսկեզօծված, զարդանախշերով (րարձր. 25 սմ), ներքին եզրերի շուրջ՝ 4 սուղ.



ԹԻՇԱՏ[ԱԿ] Է ՍԲ ՍԻԿԻՍ/ՀԱՇԴԱՐԻԱՆՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱԹ/ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ. ԹՎԻՆ
ՌԷՃԻԴ (1744) /ԹՈՂԿ]Տ[ԵՄԲԵՐ]:

Ծանոթ. Թվականը գրված է՝
 $1000+7+100+44+551=1744$:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 81

Լուսանկ. 23

166. (18718). Խաչ արծաթյա, ոսկեզօծված, կոթառին՝ 6 առդ.
 ԹԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱԶՍ/ԳՐԻԳՈՐԻ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԴՈՒԽՏԻՆ, /ՈՐ ԵՏ ՀԱՇՏ[Ա]ՐԽԱՆԱ ՊԵՏՐՈՍԻ
 ԵՒ/ՊՈՂՈՍԻ ՍԲ ԱՌԱՔԵԼՕՑՆ ԱՆՈՒԱՄԲ/ԿԱՐՈՒՑԵԱԼ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ./1774:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 82

Լուսանկ. 24 ա-դ

167. (18719). Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ընդելուզված է թանկարժեք քարերով:
 Կոթառին՝ ոլորած 6 առդ.

ԹԻՇԱՏԱԿ Է ԹԻԼՖԻՋԵՑԻ/ԲԱՂԴԱՍԱՐԻ ՈՐԴԻ ՈՂՈՐՄԱԾ/ՀՈԳԻ ՄԱՄԱՋԱՆԻՆ. ԱՅՍ
 ԽԱԶՐՍ/ՀԱՇՏԱՐԽԱՆՈՒ ՔԱՐԷ ԵԿԵՂԵՑՈՒՆ/ԴՈՒՌԸՆ ՄԱՐԻԱՄ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆՈՒ
 ԳՐԻԵՑԱԿ/ԹՎԻՆ 1742 ՀՈՔԴԵՄԲԵՐԻ ԾՈՒՄՆ:

Ծանոթ. «Գրվեցաւ» կարելի է ընթերցել նաեւ. «դրվեցաւ»:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 82

Լուսանկ. 25 ա-է

168. (18877). Խաչ արծաթյա, ոսկեզօծված: Մի կողմին պատկերված են Քրիստոսի
 խաչելության և հրեշապանների կերպարներ: Քրիստոսի խաչելության վերեւում՝

ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ
 ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ):


Մյուս երեսին՝ 11 առդ.

ԹԻՇ[Ա]Տ[Ա]Ս[Ա]Կ Է ՍԲ/ ԽԱԶՍ
 ԿԵՕԶԼՈՎՑԻ/ՏԻՐ[Ա]Յ[Ո]Ի
 ՅԱՐ/ՈՒԹԻՒՆԻ/ ԾՆՈՂԱՑՆ/ԵՒ
 ՊԻԱԹԱՅԻՆ Մ[Ա]ՀՏ[ԵՍ]Ի ՓԱՆՈՍԻՆ
 ԵՒ ԱՅԼ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ/ Ի ՆՈՐԱՇԵՆ
 Ք[Ա]Ղ[Ա]ՔՍ ՆԱԽԻՋԵԻԱՆ/ Ի ԴՈՒՌԸ
 ՍԲ/ՆԻԿՈՂԱՅՈՒՍԻՆ. ԹՎ[ԻՆ] ՌԲՃԼԱ
 (1782):


Ծանոթ. Բնականը գրված է.
 $1000+2+100+31=1231+551=1782$:

Հրատ. Գր. Գրիգորյան,
 ՄՋՀԱ, 83

Լուսանկ. 26



169. (18878). Խաչ արծաթյա, ոսկեզօծված. մի կողմին խաչելության պատկերն է՝ վերեւում ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ), հապավումը:



Հակառակ կողմին՝ 18 տող.

ԲԱՐԵ/ԽՕՍ ՍԲ/ՆՇԱՆՍ Մ[Ա]ՀԴ/ԼԵ]ՍԻ
Յ/ՈՀԱՆ/ՆԻՍ/ԻՆ ԵԻ ԿԵՆԱՑԻՆ ՍԷՖԷՐ
ՊԻԱՑԻՆ, ԾՆ|Ո|Ղ[Ա]ՅՆ ԽԱԶ/ԳՌՈՒՋԻՆ ԵԻ
ՇԱՀՆՈՒՐԻՒՆ, ՈՐԴԻՈՑՆ ԷՂԻԱԻՆ/,
ԴՍՏԵՐ/Ն ԵԱ/ՂՈՒԹ/ՊԻՔԱ/ՅԻՆ. Ի/
ԴՈՒՌՆ/ՍԲ ՅԱՐՈՒ/ԹԵ[ԱՆ]: ԹՎ[ԻՆ]
ՌՃ/ԼԱ (1682):

Մանր. Սրճանագրության մեջ
հիշատակված Խաչգուղը, ամենայն
հավանականությամբ, 17-րդ դարի
ականավոր ռանաստեղծ, տարեգիր
Խաչատուր Կաֆայեցին է (ծնված 1592
թ., տես Աս. Մնացականյան, Դարձյալ
Մատենադարանի նո. 7709 ձեռագրի
մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» 1978, 1, էջ


76), որի կապակցությամբ առաջին անգամ աշխատություն է հրապարակել Ա. Արրահամյանը («Էջմիածին», 1944, N 1, էջ 39-51): Խաչգուղը Խաչատուր Կաֆայեցու աշխարհական անունն է: Վ. Հակոբյանի կարծիքով, Խաչգուղը մահացել է 1659 թ. սկզբներին, քանի որ նա իր տարեգրությունը ժամանակագրել է մինչև 1658 թ. (Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, էջ 205): Հանգամանորեն տես Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երեւան, 1956):

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 83

Լուսանկ. 27

170. (18879). Խաչ արծաթյա, ոսկեզօծված, գնդաձև պատվանդանին՝
ՍԱ Է ԹՒԱԳԱԼԱԻՈՅԻ ՀՐԷԻՅ.

Խաչթւերին՝ 10 տող.



ԿԱԶՄ/ԵՑԱԻ / ՆՇ/ԱՆՍ
ԱՐԴ/ԵԱՄԲԳ ՅԱՐՈՒԹԵԼԱՆ
ՀԱԻԱ/ՍԱՐ ԺՈՂՈՂՎԱՐԴԵԱՆՆ ԵԻ
ԵԳԱԻ / Ի ՍԲ / ՅԱՐՈՒԹԵԼԱՆ
ՏԱՀ/ԱՐԻՍ. / ԹՎԻՆ ՌՃԺ (1661):

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 83


ԼՈՒՍԱՆԿ. 28

171. (18880). Խաչ արծաթյա, ոսկեզօծված (ճզմված): Մի երեսին՝ խաչելուձյան պատկերից վեր աղուցված թիթեզին, սրբապատկերներ են և



ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷՏ):

Մյուս երեսին՝ շրջանաձև մեղալիոնների մեջ ելնդավոր տառերով 22 տող.



ԲԱՐԵԽԱԻ/Ս Է ՍԲ ՆՇԱ/ՆՍ
Խ[Ո]Ճ[Ա]Յ Թ/ԱԻԽՏԱՄԻ/ՇԻՆ
ՀՈԳ[Ո]ՅՆ ԵՒ ԿԵՆԱԿՑ/ԻՆ՝
ՈՒԼՈՒՊԻՔԱՅԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ.
ԴԷՄԻ/ՐԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ
ԱԼԹՆԻՆ,
ԵՂԲԱԻՐՆ/ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ,
ՈՐ ՏՂԱ ՀԱՍԱԿ/ԱԻ ՓՈԽԵՑԱԻ Ի
ՔՍ ԵՒ ՋԱԻ[Ա]Կ[Ա]ՅՆ
ՆՈՐԱԲՈՂ/ԲՈՋ ՄԱՆԿԱՆ/ՑՆ
ՄԱՐՏԻՐՈՍԻՆ/ ԵՒ ՅԵՍԱՅԻ/ՑՆ,
ՈՐ ՓՈԽ/ՑԱՆ ԱՌ-ՔՍ/, ԵՒ
ԱՍՏՈՒԱԾ/ԱՏՐԻՆ/. ՅԻՇԱՏԱԿ Է/
Ի ԴՈՒՌՆ ՍԲ/ ԳԷՈՐԳԱՅ./ ԹՈՒԻՆ
ՌՃԺ/Թ (1670):


Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ. 83

Լուսանկ. 29


172. (18881). Խաչ արծաթյա,
խաչթեերին՝ Հրեշտակապետների,
իսկ կենտրոնում՝ խաչելության

պատկերներն են, որոնց վերևում ագուցված թիթեղի վրա՝

ՅՍ ՆՋ ԹԿ ՀՐ (ՅԻՍՈՒՍ ՆԱՋՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ):



Հակառակ երեսին՝ 18 տող.



ՅԻՇԱՏ/ԱԿ Է ՍԲ
/ՆՇԱՆՍ/ՀՐԵՇՏ/ԱԿԱՊԵՏ/Ի
ԺՈՂՈ/ՎՐԴԵԱՆՆ՝ ԽՈՃԱՅԻՆ, ԿԱԿՈՍԻՆ,
ՍԻՄԷՈՆ/ԻՆ, ԽՈՃԱ, ՅՈՎԱՆԻՍԻՆ,
ՍՈՒԼԹԱՆԻՆ, ՏԷՐ ԱՆՏ/ՈՆԻՆ,
ԱԻԵՏԻՔԻՆ, ՎԱՐԴԱՆԻՆ,
ՅՈՎԱ/ՆԻՍԻՆ/, ՂԱԶԱՐ/ԻՆ. Ի ԴՐ/ՈՒՆՍ
ՍԲ/ՀՐԵՇՏ/ԱԿԱՊԵՏ/ՏԻՆ. ԹՎ/ԻՆ ՌՃ/Ծ
(1701):

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 83

Լուսանկ. 30 ա-ր

173. (19374). Բուրվառ. արծաթյա, նախադարձ: Երեսին՝ 5 առգ.

ԽԱՇԱԿԷՔԷՔԷԻՄԵՍԱՊԵՏԻԱՐՍԻԿԱՆԷԼԻ ԿՆՈՋԱԿԷԼԵԱԿԻԿԱՆՎՆՈՅԻ
Ի ԴՐՈՒՆՍԻՆԻԱՆՎԱՆԻՅՆ ԴՐԻՄՈՒՄ 1818

ՅԻՇԱՏԱԿ Է ՔԷՖԷԻ ՄԱՔՍԱՊԵՏ/ԹԱՐՍ ԻՒԱՆԻՉԻ ԿՆՈՋ՝ ՄԷ/ԼԻՆԱՅ ԻՒԱՆՈՎՆՈՅԻՆ.
Ի/ԴՐՈՒՆՍ ՍԲ ԽԱՉ ՎԱՆԻՅՆ/ԴՐԻՄՈՒ. հղեղ 1818:

Ծանոթ. ԹԱՐՍ անձնանունը կարելի է կարգալ նաև ՏԱՐԱԱ, հայերեն թՈՐՈԱ բառի
ռուսական տարբերությունը: Արձանագրությունն ունի կրկնակի թվագրություն՝ արա-
րերեն թվերով և սանսկրիտերեն:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 85

Լուսանկ. 31 ա-է

174. (19627). Սափոր արծաթյա, ոսկեգծոված, բերանի ընդվածքի տրամագիծը՝ 16 սմ:
Խաչելության պատկերից վեր՝ ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԴԱՒՈՐ ՀՐԷԻՑ):

Լուսանկ. 32

175. (19659). Խոշ արծաթյա, ըուսական զարգերով: Մի կողմին՝

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉՍ/ ԱՍՎԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ/ՅԱՐՈՒԹԷՆԻ./ Ի ԴՐՈՒՆՍ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ.] ԾԱԾՆԻ,
ՈՐ Է ՂԱՐԱՍՈՒՆ./ՅԱՄԻ Տ[ԵԱՌ.] Ն 1780, ՆՈՆԵՐԵՐԻ/ ՄԷԿ. ՌՄՃԼԹ (1790):

Ծանոթ. 1. Արձանագրության մեջ հիշատակված Ղարասուն կոչվել է նաև Ղարասու-
րագար: Այժմյան Ղրիմի Բելոգորսկ քաղաքն է:


2. ՌՄԻԹ-ի փոխարեն թվագրված է ՌՄՃԼԹ, այսինքն՝ $1000+200+100+39+551=1790$:
Կարծում ենք, ի-ի փոխարեն սխալմամբ փորագրված է Լ(30), ուստի ստացվել է 1790:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 86

176. (19703). Խաչ արծաթյա, ոսկեղօծված: Մի կողմին՝ Քրիստոսի խաչելության պատկերն է՝ գլխավերևում ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ):

Հորիզոնական խաչքների ծայրերին՝ ՏՐ ԱՄ ՅՍ ՔՍ

Մյուս կողմին՝ մանրատառով՝ 18 տող.



ԲԱՐ/ԵԽՕՍ Է ՄԲ ՆՇԱՆԸՍ/ՕՎԱՆ/ԷՍԻՆ ՀՈԳՈՒՆ
ԵԻ/ ԾՆՈՂ/ ԱՑԸՆ/ ԽԱԶԿ/ՈՒՌՈՒ/ՋԻՆ, ՆԷՖԷՐ
ՊԻՔԱՅԻՆ, ՈՐԴԻԳԸՆ ԽԱԶԿՈՒՌՋ, ԼՈՒՍ/ՊԱՐՈՆ
ՄԵՐԿ/ԵԱՆ/ . ԻՇԱՏ/ԱԿ Է Ի/ԴՈՒ/ՌՆ ՄԲ
/ՀՐԵՇ/ՏԱԿ/ԱՊԵՏ/ԻՆ. ԹՎԻՆ ՌՃ/ՁԱ (1732)ԻՆ:


Ծանոթ. Խաչգուռ (Խաչատուր Կաֆայեցի)
րանաստեղծի թոռ. Լուսպարոն Մերկյանը
ղրիմաՀայ գաղութի ականավոր գործիչներից
մեկն էր: Նրա անմիջական մասնակցու-
թյամբ ու «վերակացութեամբ» կառուցվել և
նորոգվել են Թեոդոսիայի մի շարք եկեղե-
ցիներ ու մատուռներ: Նեցուկ ունենալով
ղրիմաՀայոց հողերը առաջնորդ աեր-Սիմեո-
նին, ճարտարապետներ Սարգսի և Մինասի
ղեկավարությամբ նա վերանորոգել ավեց
քաղաքի Ս. Գևորգ եկեղեցին, Ս. Սարգիս
մայր տաճարի դուռը և այլն (աես Մինաս
Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաս-

տան, Վենետիկ, 1830, էջ 350-352, Հմմտ. X. Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи и старинные армянские рукописи в пределах юго-западной Руси и в Крыму, М. 1892, с. 37/

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 86

Լուսանկ. 33

177. (19707). Քչոց արծաթյա: Մի կողմին՝ խաչելության տեսարանը, որի վերևում ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ): Հակառակ կողմին՝ 12 տող.




ՅԻՇԱՅՏԱՅԱՅ Է/ ՄԲ
ՆՇԱՆՍ/ՄԱՀ/ԴԵՍԻ/ՏՕԼ/ՎԱԹ
ՊԻՔԱՅԻՆ ԵԻ ԻԻՐ ԾՆՈՂԱՑՆ ԵԻ
ՋԱԻԱԿ/ԱՑՆ՝ ՄԻԱՍԱՐԻՆ ԵԻ ԽԱՆԻ
ՊԻՔԱՅԻՆ. Ի ԴՈՒ/ՌՆ Մ
Բ/ԼՈՒՍԱԻ/ՈՐՁԻՆ. ԹՎ/ԻՆ/ՌՃԺԲ
(1663):

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 86


Լուսանկ. 34 ա-ր

178. (19708). Քշոց արծաթյա, ոսկեզօծված: Մեկ երեսին՝ խաչելության տեսարանը և



ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ),

մյուսին՝ խաչթևերի վրա՝ 15 առդ.



ԲԱՐԵ/ԽՕՍ Է ՄԲ/ՆՇԱՆՍ [Ս]ՈՒԼ/ԹԱՆ
ՊԻ/ԼՔ]ԷԻՆ ԱՌՆ Խ[Ո]Ճ[Ա.]Ց ՇԵՀՐԻԻՆ,
ԴՍՏ/ԵՐՆ՝ ՏՕԼՎԷԹ ՊԻՔԷԻՆ ԵԻ ՓԵՍԻՆ՝/ՊԱՐ/ՈՆ
ՄԻԵ/ՍԵՐԻՆ./Ի Դ[ՈՒ]ՈՆ/ՄԲ ԼՈ/ԻՍԱԲՈՐ/ՋԻՆ.
ԹՎԻՆ ՌՃԽԸ (1699)ԻՆ:


Ծանոթ. Այս և նախորդ արձանագրության
մեջ հիշատակված անձինք ազգակիցներ են:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 86

Լուսանկ. 35 ա-ր

179. (19712). Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ոչ մեծ չափսի: Մեկ կողմին՝ ՅՆԹՀ (ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ):

խաչթևերին՝ 9 առդ.



Յ[Ի]Շ[Ա.ՏԱ.]Կ Է/ ՄԲ ԽԱ/ՋԸՍ/ԱՃ/ԱՄ ԳԱԻԹԱԻ
ՀՈԳՈՅՆ. Ի ԴՈՒՈՆ/ՄԲ ԼՈՒՍԱԲ/ՈՐՋԻ/.
ԹՎԻՆ/ՌՐՃԷ (1758):


Ծանոթ. 1. Աճամ (աջամ) արարներն սկզբնա-
պես անվանում էին պարսկերեն, սակայն
ավելի ուշ շրջանում «ե. արարները, և թուր-
քերը, և քրդերը «աջամ» էին կոչում ոչ
միայն պարսկերեն, այլև նրանց զավա-
նակից (չիա) ազրեջանցիներին» (տես Մատե-
նագարանի պարսկերեն վավերագրերը. Կալ-
վածագրեր, պրակ 1, (ԺԴ-ԺԶ զգ.) կադմեց Հ.
Դ. Փափագյան, Երեան, 1968, էջ 185): Մեր
զեպքում՝ աճամ նշանակում է պարսկահայ:
Տես նաև, N 162 արձանագրության ծանոթա-
գրությունը:

2. ՌՄԷ-ի (1207-ի) փոխարեն թվագրված
է ՌՐՃԷ (1000+200+7+551=1758):

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 86

Լուսանկ. 36 ա-ր

180. (19715). Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ոչ մեծ չափսի. մեկ երեսին՝ խաչելության պա-
կերից վեր ամրացված արծաթյա ուժրաճև թիթեզի վրա փորագրված է ՏԷՐ: Մյուսին՝ 11 առդ.




ՅԻՇԱՆ/ՏԱԿ ԷՐ ԵՐ ԻՄԱՐԱՆ/ ԷՐԵՄՈՒՄ ԻԹՐ ԴԻՄ ԵՐ ԻՄԱՐԱՆ/ ԷՐԵՄՈՒՄ ԻԹՐ ԴԻՄ ԵՐ ԻՄԱՐԱՆ/ ԷՐԵՄՈՒՄ ԻԹՐ ԴԻՄ (1758):

Մանոք. Թվագրված է N 179 արձանագրության նմանակությամբ:

Հրաա. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 87

Լուսանկ. 37

181. (19716). Խաչ արծաթյա, ոսկեզօծված: Մի կողմին խաչելության պատկերն է, մյուսին՝ 18 տող.



ՅԻՇԱՆ/ՏԱԿ ԷՐ ԵՐ ԻՄԱՐԱՆ/ՏԻՐԱ/ՅՈՒ/ ՇԱՀԻ/ՆԻՆ/ՀՈԳՈՅՆ ԵՒ ԿՈՂԱԿՅՈՒՆ/ ԳՈՒՀԱՐԻՆ/ԵՒ ՈՐ/ԴՈՅՆ / ՍԻՄԵ/ՈՆԻՆ/ Ի ԳՈՒ/ՈՆ/ ՄԲ /ՅՈՎՀԱՆ/ՆՈՒ ԹՎ[ԻՆ] Ո/ՃՁ (1731):

Հրաա. Գր. Գրիգորյան, ՄՁՀԱ, 88

Լուսանկ. 38 ա-բ

182. (19717). Խաչ արծաթյա, ոսկեջրած: Խաչելության տեսարանից վեր՝ ԹԱՀ ՅՈՒ:
Հակառակ երեսին՝ 14 տող.



ԲԱՐԵ/ԽՕՍ Է/ՄԲ ՆՇԱՆ/Ս Պ/ԱՐՍԱՄԻՆ ՀՈԳՈՆ
ԵՒ ՄԱՐ/ԻԱՄԻՆ ԵՒ ԼՈՒՍՊԻՔԱՅԻՆ/ ԵՒ
Ծ[ՆՈՂԱՑՆ]. Ի Դ[ՈՒ]ՌՆ/ ՄԲ
Հ/ՐԵՇ/ՏԱԿԱՊ[ԵՏ]ԻՆ. ԹՎ[ԻՆ] ՌՃԿ/Ը (1719ԻՆ):

Ծանոթ. 1. Հոգոյն ըստի շիրիսարեն
փորագրված է ըստ ընդհանուր հոգոյն ձևը:
Գիտակցարար վերծանության մեջ չենք
շահում:

2. Անհատականալի է ԹԱՀ ՅՈՒ տառաշարքը:
Արդյո՞ք Հրէից հապավման ազդեցությունը
չէ:

Հրատ. Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ, 88

Լուսանկ. 39

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանի Թանկարժեք մետաղների և Գործվածքի ու տարադի ըստ ժամանակի պահպանվում են ըստ ժամանակի իրեր, որոնք պատրաստված են Հայ վարպետների ձեռքով ինչպես ըստ Հայաստանում, այնպես էլ տարրեր դադարավայրերում: Հայտնաբերված առարկաների մեծ մասն ունի կրոնա-ծիսական ընդհանրություն: Դրանք ոսկյա և արծաթյա խաչեր են, սկիհներ, ընդհանրություններ, մասնատուփեր, քչոցներ, լվացարաններ, ծնծղաներ, խուլյեր և այլն¹: Արձանագրություններ ունեցող իրերը թվագրվում են հիմնականում 15-19-րդ դարերով: Նրանցում հիշատակվում են կրոնական և քաղաքական գործիչներ, ականավոր զինվորականներ. նշվում են պատրաստման վայրի ու վարպետների անունները:

Ատորե տրվում են նորահայտ հետազոտությունները, որոնք ընդօրինակվել և վերծանվել են մեր կողմից 1980 թ. խմբարչավի ընթացքում: Արձանագրությունների սկզբում նշվում են մեր համարակալումը, ապա երկու թվահամարներ, որոնցից առաջինը Թանգարանի ֆոնդային ընդհանուր համարակալումն է, իսկ երկրորդը՝ տվյալ ըստ ժամ, ուր այժմ պահպանվում են նկարագրվող իրերը:

¹ Վիսագրական արձանագրությունն աջակցելու համար խորին շնորհակալություն եմք հայտնում թանգարանի ղեկավար Կ. Գ. Լևիկինին, Հատուկ գանձարարական ֆոնդերի վարիչ Ն. Գ. Պլատոնովային, Գիտական կոնսուլտանտ, պատմական գիտությունների դոկտոր Մ. Մ. Պոստնիկովային, ավագ գիտաշխատող Բ. Լ. Ուլանովային և Գործվածքի ու տարադի բաժնի աշխատակիցներին: